ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 368 – Ա

31 օգոստոսի 2020 թ.

ՋԻՎԱՆ ՖԻԴՈՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 12-րդ մասերի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Ջիվան Ֆիդոյանի անձնական դիմումն

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ջիվան Ֆիդոյանին տրամադրել 2020 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից սեպտեմբերի 22-ը ներառյալ (15 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ջիվան Ֆիդոյանի պարտականությունները 2020 թվականի սեպտեմբերի 1-ից սեպտեմբերի 22-ը ներառյալ դնել «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Էլմիրա Խաչատրյանի վրա:

3. Ջիվան Ֆիդոյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի սեպտեմբերի 23-ից:

31.08.2020

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Подписано: GRIGORYAN NAREK 1610910273